ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ
ՎԱՐՉԱԿԱՆ-ԱՊԱՐԱՏԻ
ՂԵԿԱՎԱՐ

РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАТИВНОГО
АППАРАТА ГЛАВНОГО
ШТАБА ВООРУЖЕННЫХ
СИЛ РА

«25» 12 2014թ.
1157/ԳՇ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿԻ ԻՐԱՎԱԲԱՆ
Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կորուստների վերաբերյալ քանակական տվյալների, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքի հետ կապված դրանց պատճառների տրամադրման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված 17.12.2014թ. N 233-5 գրության առնչությամբ հայտնում եմ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 4 հոկտեմբերի 2012թ. «ՀՀ կառավարության 1998թ. մարտի 13-ի թիվ 173 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1277-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների» ցանկի I-ին գլխի 3-րդ կետի պահանջների, Ձեր կողմից պահանջվող տեղեկությունները համարվում են **«ռազմաքաղաքական և օպերատիվ իրազեկության մասին»** տեղեկություններ:

Ինչ վերաբերվում է աղրբեջանական բանակի զինված ուժերում կորուստների և քանակական պատկերների վերաբերյալ տեղեկության տրամադրմանը, ապա հայտնում եմ, որ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու և գործողության դնելու մասին» համապատասխան հրամանի պահանջների, սույն տեղեկությունը համարվում է **«Հույժ գաղտնի»** տեղեկություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (Տեղեկատվության ազատության սահմանափակումները) 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջներով, հայտնում եմ, որ ՀՀ զինված ուժերում (5 տարիների) կորուստների քանակական տվյալների, յուրաքանչյուր դեպքի հետ կապված դրանց պատճառների, ինչպես նաև աղրբեջանական բանակի զինված ուժերում կորուստների և քանակական պատկերների մասին տեղեկատվության տրամադրման վերաբերյալ Ձեր խնդրանքը բավարարել չենք կարող:

Հարգանքով՝

Գեներալ-մայոր Ա. ԲՐՈՒՏՅԱՆ